

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 2016 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը «և համատեղ զավակ ունեցող անձը» բառերից հետո լրացնել «՝ եթե սույն մասի 1-ին կետի հիման վրա հատուցման գումար չի նշանակվել (եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ զինծառայողը չի գտնվել գրանցված ամուսնության մեջ այլ անձի հետ)» բառերով:

Հոդված 2. 4-րդ հոդվածի 5-րդ մասում.

1. 2-րդ կետի «և ժամկետներում» բառերը փոխարինել «, պայմաններով և ժամկետներում» բառերով,
2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետ.

«3) շահառուներին, մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի հետևանքով զինծառայողի առողջությանը վնաս պատճառվելու դեպքում՝ հիմնադրամի շահառու չճանաչված զինծառայողներին Կառավարության համաձայնությամբ և իր սահմանած պայմաններով և կարգով սոցիալական ծառայություններ մատուցելու վերաբերյալ՝ հիմնադրամի միջոցների հաշվին:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում.

- 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հարկային գործակալից կամ Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձից եկամուտ ստացող

անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային ամիսը, իսկ հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար՝ օրացուցային տարին.»,

2) 4-րդ կետը «եկամուտ վճարող» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառված» բառերով:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում.

- հանել «սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի» բառերը,
- 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) Հարկային գործակալից կամ Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են հետևյալ դրույքաչափերով.»,

- 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը և նոտարները դրոշմանիշային վճարը վճարում են հետևյալ դրույքաչափերով.»,

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Սույն հոդվածի 1-ին մասում չնշված անձինք դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն.»,

Հոդված 7. Օրենքի 15-րդ հոդվածում.

- 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ.»,

- 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Դրոշմանիշային վճարներն ինքնուրույն կատարող՝ հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը և նոտարները դրոշմանիշային վճարը կատարում են մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներառյալ՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրոշմանիշային վճարի հաշվարկման բազաները:»:

Հոդված 8. Օրենքի 31-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-5-րդ մասերով.

«2. Եթե սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի հիման վրա շահառու ճանաչված՝ առաջին կամ երկրորդ խմբի կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձը ճանաչվում է երրորդ խմբի կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ, ապա հիմնադրամը շարունակվում է վճարել ամսական դրամական աջակցություն.

1) պայմանագրային կամ գորահավաքային կամ պարտադիր գինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի գինծառայողի դեպքում՝ 75 000 դրամի չափով,

2) պայմանագրային կամ գորահավաքային գինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի գինծառայողի կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձի դեպքում՝ 50 000 դրամի չափով,

3) պարտադիր գինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի գինծառայողի դեպքում՝ 25 000 դրամի չափով:

3. Զինծառայողի՝ կրկին հիմնադրամի շահառու ճանաչվելու դեպքում (առաջին կամ երկրորդ խմբի կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու կամ սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում նշված ժամկետում և պատճառով մահանալու դեպքում) սույն հոդվածի 2-րդ մասի հիման վրա վճարված դրամական աջակցության գումարները համարվում են փաստացի վճարված հատուցման գումարներ և նվազեցվում են սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում նշված հատուցման գումարներից:

4. Սույն հոդվածով նախատեսված դրամական աջակցությունը տրվում է առավելագույնը 36 ամիս ժամկետով՝ սկսած 2022 թվականի հունվարի 1-ից հետո երրորդ խմբի կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու ամսվանից, բայց ոչ ավելի վաղ, քան վերջին անգամն ամսական հավասար վճարը վճարելուն ամսվան հաջորդող ամսվանից: Դրամական աջակցությունը դադարեցվում է գինծառայողին կրկին շահառու ճանաչվելու կամ սույն մասում նշված 36-ամսյա ժամկետը

լրանալու կամ գինձառայողին հաշմանդամություն ունեցող անձ չճանաչելու կամ գինձառայողի մահվան կամ սույն հոդվածի 5-րդ մասում նշված ժամկետը լրանալու դեպքում: 5. Սույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի գործողությունը դադարում է 2026 թվականի հունվարի 31-ից:»:

Հոդված 9 Սույն օրենքը, բացառությամբ 3-8-րդ հոդվածների, ուժի մեջ է մտնում մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի 3-7-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքի 3-րդ և 5-7-րդ հոդվածները տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Սույն օրենքի 8-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2023 թվականի փետրվարի 1-ից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ Օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի հիման վրա շահառու ճանաչված անձը երրորդ խմբի կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ է ճանաչվել 2022 թվականի հունվարի 1-ից հետո:

Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող կամ զոհված (մահացած) զինձառայողի ծնողի, ամուսնու և (կամ) զավակի (զավակների)՝ 2022 թվականի համար հաշվարկված եկամուտներից վճարած (նրանց եկամուտներից հարկային գործակալի պահած), ինչպես նաև 2021 թվականի համար հաշվարկված և 2022 թվականի ընթացքում վճարված դրոշմանիշային վճարի գումարներն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերադարձվում են Կառավարության սահմանած կարգով, եթե համապատասխան դիմումը ներկայացվում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո տեղի ունեցած հատուցման դեպքերի վրա: Այս դեպքում հատուցման գումարը Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետում նշված շահառուին վճարվում է համապատասխան դիմումը Հիմնադրամին ներկայացնելուն հաջորդող ամսվանից:

Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի հիման վրա շահառու ճանաչված անձի հատուցման իրավունքը չի վերանայվում: